

ԽՆԴԻՐՆԵՐ


Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- Հաշվիչ օգտագործել չի թույլատրվում:
- Ցուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր:
- Մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող խնդիրներ

1. Որքան բարձր է պատվանդանը, այնքան բարձր է վագորդի զբաղեցրած տեղը (տե՛ս նկարը): Ո՞ր վագորդն է ավարտել վագրը երրորդ տեղում:



- (A) A (B) B (C) C (D) D (E) E

2. Երեկ կիրակի էր: Ի՞նչ օր կլինի վաղը:


- (A) երկուշաբթի (B) երեքշաբթի (C) չորեքշաբթի (D) հինգշաբթի (E) շաբաթ

3. Մայա ժողովուրդը գրում էր թվերը կետերի և գծերի միջոցով: 1 թիվը ներկայացվում էր մեկ կետով, իսկ 5-ը՝ մեկ գծով: Օրինակ՝ աջ կողմի նկար 1-ում բերված պատկերը ներկայացնում է 8 թիվը: Պատասխանի տարբերակներից ո՞րն է ներկայացնում 12 թիվը:




- (A) (B) (C) (D) (E)

4. Արամի գրքի առջևի կազմն ունի երկու անցք: Երբ գիրքը բաց է, այն ունի նկարում բերված տեսքը: Ո՞ր նկարներն է տեսնում Արամն անցքերից, երբ փակում է գիրքը:



- (A) (B) (C) (D) (E)



5. Կարինեն նկար 1-ում բերված պատկերից կտրում է նկար 2-ում բերված չափի պատկերներ: Պատասխանի տարբերակներից ո՞րը կարող է Կարինեն ստանալ նման ձևով:



- (A) (B) (C) (D) (E)


նկար 1

6. Երեք մարդ կեղտոտ կոշիկներով անցան ձնառատ պուրակով և թողեցին հետքեր: Ի՞նչ հերթականությամբ են նրանք անցել նկար 1-ում բերված պուրակի հատվածը:




նկար 1

7. Գայանեն նույն երկարությամբ ձողիկներից կազմված չափիչ քանոնով կառուցում է պատկերներ (տե՛ս նկարը): Պատասխանի տարբերակների պատկերներից ո՞րը կառուցելու համար Գայանեին պետք կլինեն լրացուցիչ ձողիկներ:




8. Ի՞նչ թիվ կգրի Լուսինեն հարցական նշանի տեղում, երբ նկարում բերված բոլոր հաշվարկները ճիշտ կատարի:



- (A) 4 (B) 5 (C) 6 (D) 7 (E) 8

4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Լիլիթը տախտակի վրա ամրացրեց 3 լուսանկար մեկ շարքով՝ օգտագործելով 8 քորոց (տե՛ս նկարը): Վազգենը ցանկանում է նույն կերպ ամրացնել 7 լուսանկար: Քանի՞ քորոց կօգտագործի Վազգենը:




- (A) 14 (B) 16 (C) 18 (D) 22 (E) 26

10. Դավիթը ցանկանում է հեռացնել մեկ վանդակ նկար 1-ի պատկերից: Նկար 2-ում բերված պատկերներից ամենաշատը քանի՞ սը կարող է Դավիթը ստանալ արդյունքում:




նկար 1




նկար 2

- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5


11. Ժապավենի վեց շերտեր հյուսված են, ինչպես ցույց է տրված նկարում: Պատասխանի տարբերակներից ո՞րն է այդ հյուսվածքի տեսքը հետևի կողմից:





12. Որքան է նկարում բերված մեկ խաղալիք շան զանգվածը: Այդ խաղալիք շան զանգվածը բնական թիվ է:


- (A) 7 կգ (B) 8 կգ (C) 9 կգ (D) 10 կգ (E) 11 կգ



13. Սոնան ունի ընդամենը 16 մարմարե գնդիկ, որոնք բոլորը կապույտ են: Նա կարող է փոխանակել որանք երկու եղանակով. 3 կապույտ գնդիկը՝ 1 կարմիր գնդիկով կամ 2 կարմիր գնդիկը՝ 5 կանաչ գնդիկով: Ամենաշատը քանի՞ կանաչ գնդիկ նա կարող է փոխանակելով ձեռք բերել:


- (A) 5 (B) 10 (C) 13 (D) 15 (E) 20

14. Սուրենը ցանկանում է գրել 2, 0, 1 և 9 թվանշանները նկարի վանդակներում, յուրաքանչյուրը՝ մեկ անգամ: Ի՞նչ թվանշան նա պետք է գրի հարցական նշանի տեղում, որպեսզի ստանա նկարում բերված գումարման հնարավոր ամենամեծ արժեքը:



- (A) 0 կամ 1 (B) 0 կամ 2 (C) միայն 0 (D) միայն 1 (E) միայն 2

15. Ջրով լիքը բաժակը կշռում է 400 գրամ: Դատարկ բաժակը կշռում է 100 գրամ: Քանի՞ գրամ է կշռում ջրով կիսով չափ լցված բաժակը:



- (A) 150 (B) 200 (C) 225 (D) 250 (E) 300

16. Երբ Լիլիթին հարցրին, թե քանի՞ տարեկան են նա և նրա երկու ընկերուհիները, Լիլիթը պատասխանեց. «Մենք բոլորս միասին 25 տարեկան ենք», «Ես մեկ տարով մեծ եմ Նարինեից», «Ես և Տաթևը միասին 17 տարեկան ենք»: Քանի՞ տարեկան է Լիլիթը:

- (A) 8 (B) 9 (C) 10 (D) 11 (E) 12

5 միավոր գնահատվող խնդիրներ


17. Մարթան մի քանի եռանկյուն ստանձեց միմյանց և ստացավ նկարում բերված աստղը: Ամենաքիչը քանի՞ եռանկյուն է օգտագործել Մարթան:

- (A) 6 (B) 5 (C) 4 (D) 3 (E) 2



18. 7x7 չափերով քառակուսի նկարի շրջանակ հավաքելու համար Աննան օգտագործեց 32 փոքր սպիտակ քառակուսի (տե՛ս նկարը): Քանի՞ փոքր սպիտակ քառակուսի պետք կլինի Աննային 10x10 չափերով քառակուսի նկարի շրջանակ հավաքելու համար:


- (A) 36 (B) 40 (C) 44 (D) 48 (E) 52



19. Գրքի էջերը համարակալված են 1, 2, 3, 4, 5 և այլն: 5 թվանշանը հանդիպում է ճիշտ 16 անգամ: Ամենաշատը քանի՞ էջ կարող է ունենալ այդ գիրքը:

- (A) 49 (B) 64 (C) 66 (D) 74 (E) 80


20. Անուշն ու Լուսինեն մեկ թելի վրա ուլունքներ են շարում: Անուշը մեկ անգամ հերթով շարում է \square , \circ , ∇ և \star ուլունքները թելի մի ծայրից, իսկ Լուսինեն մեկ անգամ հերթով շարում է \star , \circ , ∇ և \square ուլունքները թելի մյուս ծայրից: Պատասխանի տարբերակներից որո՞ւմ է բերված աղջիկների շարած ուլունքները:



21. Այգում կա 15 կենդանի՝ կովեր, կատուներ և կենգուրուներ: Հայտնի է, որ դրանցից ճիշտ 10-ը կով չեն, իսկ ճիշտ 8-ը կատու չեն: Քանի՞ կենգուրու կա այդ այգում:

- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 8 (E) 10


22. Մարիամն ունի 9 փոքր եռանկյուն, որոնցից 3-ը կարմիր են (R), 3-ը՝ դեղին (Y) և 3-ը՝ կապույտ (B): Նա ուզում է կառուցել մեծ եռանկյուն՝ տեղադրելով այդ 9 փոքր եռանկյուններն այնպես, որ ցանկացած երկու եռանկյուններ, որոնք ունեն ընդհանուր կողմ, լինեն տարբեր գույնի: Մարիամն արդեն տեղադրել է որոշ փոքր եռանկյուններ, ինչպես ցույց է տրված նկարում: Պատասխանի տարբերակներից որո՞րը կլինի ճիշտ, երբ նա տեղադրի բոլոր եռանկյունները:



- (A) 1-ը դեղին է, իսկ 3-ը՝ կարմիր (B) 1-ը կապույտ է, իսկ 2-ը՝ կարմիր
(C) 1-ը և 3-ը կարմիր են (D) 5-ը կարմիր է, իսկ 2-ը՝ դեղին
(E) 1-ը և 3-ը դեղին են

23. Գրիգորը նույն չափերով A, B, C, D, E, F, G և H ութ քարտերը շարեց իրար վրա կամ կողք կողքի այնպես, որ ստացավ նկարում բերված քառակուսին: Գրիգորը ո՞ր քարտն է դրել առաջինը:

- (A) E (B) D (C) B (D) H (E) F



24. Մայրիկը սկսեց կախել սրբիչներ՝ յուրաքանչյուր սրբիչի համար օգտագործելով երկու սեղմակ, ինչպես ցույց է տրված նկ. 1-ում: Նա ընթացքում հասկացավ, որ իր ունեցած սեղմակները չեն բավարարի սրբիչները նույն եղանակով կախելու համար և շարունակեց դրանք կախել նկ. 2-ում բերված եղանակով: Մայրիկն ընդհանուր առմամբ կախեց 35 սրբիչ և օգտագործեց 58 սեղմակ: Մայրիկը քանի՞ սրբիչ է կախել նկ. 1-ում ցույց տրված եղանակով:

- (A) 12 (B) 13 (C) 21 (D) 22 (E) 23

